ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Ա. ԱՎԱԳՅԱՆ

01.09.2022թ.

# Բյուրեղավանի Ս. Վարդանյանի
# անվան ավագ դպրոցի
# 2022-2023 ուսումնական տարվա
# դասղեկի աշխատանքային պլան
# 12-րդ «Բ» դասարան
# Դասղեկ՝ Խ.Օխոյան

# ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Դասարանում ընդգրկված են 15 աշակերտներ՝ 3 տղա, 12 աղջիկ: Դասարանում կան 1 անապահով աշակերտուհի՝ Շարոյան Մարիետան, որը բազմազավակ ընտանիք է: Կոմպլեկտավորումից հետո երրորդ տարին է ինչ միասին են և կարծես նոր-նոր մերվում են իրար հետ, այն դեպքում երբ անցյալում իրար չէին հանդուրժում և հաճախ էին վիճում: Ուսումնական տարվա սկզբից ես նկատեցի միմյանց նկատմամբ ջերմություն և հոգատարություն: Հույսով եմ մինչև տարվա վերջ էլ ավելի կհամախմբվեն: Բոլոր աշակերտներն էլ ուսման մեջ ձգտում են հասնել առավելագույնին: Դժվար դաստիարակվող և հատուկ ուշադրության կարիք ունեցող աշակերտ չկա:

# Նախատեսված ուսումնադաստիարակչական աշխատանքներ՝

# ըստ ամիսների

| Ամիսը | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Նշումներ |
|---|---|---|
| Օգոստոս-սեպտեմբեր | Դասագրքերի բաշխում: | |
| | Դասասենյակի կահավորում: | |
| | Աշակերտի մասինտեղեկությունների հավաքագրում, ճշտում: | |
| | Հրավիրել ծնողական ժողով.<br>Ընտրել ծնողական խորհրդի կազմը:<br>2.Ներկայացնել ուսուցման կազմակերպման գործընթացը նոր ուստարում: | |
| | Մասնակցել Ս. Վարդանյանի հիշատակության ցերեկույթին | Սեպտեմբերի 14 |
| | Դասարանի սանիտարահիգիենիկ վիճակի ամենօրյա, հաճախման հաշվառում | Ուստարվա ընթացքում |
| | Ստեղծել ներկոլեկտիվային ինքնավարության մարմիններ՝ դասարանի խորհրդի նախագահ, հերթապահներ, ընտրել խորհրդի կազմը: | |
| | Զրույց <<Հայրենասիրության թեմայով>> | |
| | Ապահովել աշակերտ- դպրոց ծնող սերտ կապը: | Ուստարվա ընթացքում |
| | Անցկացնել պլանավորված զրույցներ դասղեկի ժամեր՝ հետևյալ թեմաներով.<br>1.Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծություն, նոր ուստարվա անելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում:<br>«Արժեքներ»<br>3.Սանիտարահիգիենիկ զրույց<br>«Ես անկախ Հայաստանի քաղաքացի եմ» /զրույց՝ նվիրված Անկախության տոնին/: | |

| | | |
|---|---|---|
| Հոկտեմբեր | Կատարել դասալսումներ տարբեր առարկաներից /ամսվա ընթացքում՝ 2 դասալսում/ | Ամսվա ընթացքում |
| | Համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ՝ աշակերտների առաջադիմության բարձրացման նպատակով: | Ամսվա ընթացքում |
| | Կազմակերպել հանդիպում հոգեբանի հետ. քանի որ աշակերտներից մեկի մոտ խնդիրներ ենք նկատել. | Ամսվա ընթացքում |
| | Զրույց <<Ինչպես ճիշտ ընտրել մասնագիտություն>> թեմայով | |
| | Ուսուցչի օրվա առիթով կազմակերպել ինքնակառավարման օր, 12-րդ դասարանցիները կդասավանդեն | Հոկտեմբերի 5-ին |
| | Ինքնակառավարման արդյունքների քննարկում | |
| | Ուսումնական ծրագրին համապատասխան, կամ հայրենասիրական թեմայով այցելել թատրոն | |
| | Կլոր սեղանի շուրջ քննարկել դասարանում տիրող իրավիճակը և քննարկել անհատական բոլորի դրական ու բացասական կողմերը | |
| | Աշնանային արձակուրդին կազմակերպել էքսկուրսիա<<Գառնի, Գեղարդ>>. | |
| | | |
| | | |
| | Անցկացնել պլանավորված զրույցներ դասղեկի ժամերին հետևյալ թեմաներով.<br>1.«Շնորհավոր տոնդ, ուսուցի՛չ»<br>2.«Թարգմանչաց տոնի խորհուրդը»<br>3.«Իմ քաղաքը Հռոմից էլ 29 տարով մեծ Երևանն է» | |
| Նոյեմբեր | Բուժքրոջ հետ ստուգել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակը: | |
| | Աշխատանք տանել հաճախակի ուշացող և բացակայող աշակերտների հետ: | |
| | Կազմակերպել անհատական աշխատանքներ խնդրահարույց աշակերտների հետ : | |

| | | |
|---|---|---|
| | Անցկացնել պլանավորված զրույցներ դասղեկի ժամերին հետևյալ թեմաներով.<br>1. «Հիգիենայի կանոններ»<br>2. «Հայրենիքը սկսվում է…»<br>3. «Արժանապատվություն»<br>4. Էքսկուրսիա թանգարան | |
| Դեկտեմբեր | Դասալսումներ կատարել բոլոր առարկաներից: | |
| | Համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ: | |
| | Աշխատանքներ տանել ուսման մեջ թերացող աշակերտների հետ: | |
| | Կատարել հայտագրում ԲՈւՀ և դպրոցական քննությունների.<br>Հետևել աշակերտներին պատշաճ քննությունները հանձնելու: | |
| | 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում: | |
| | Անցկացնել պլանավորված զրույցներ դասղեկի ժամերին հետևյալ թեմաներով.<br>1.«Գյումրին կանգնեց»<br>2.«Իմ երկրի ապագան իմ աչքերով»<br>3.«Արվեստի ուժը»<br>4.«Ամանորյա անակնկալ» | |
| Հունվար | Հրավիրել ծնողական ժողով: | |
| | Ձևավորել առանձնահատուկ վերաբերմունք պետության, պետական խորհրդանիշերի նկատմամբ: | |
| | Ծանոթացնել երեխաներին ազգային հերոսների հետ: | |
| | Վերահսկել կարգապահական կանոնները: | |
| | Անցկացնել պլանավորված զրույցներ դասղեկի ժամերին հետևյալ թեմաներով.<br>1.«Նոր տարում՝ նոր սպասելիքներով»<br>2.«Դասարանի առաջին կիսամյակի արդյունքները. քննարկում»<br>3.«Հայոց բանակի իմ հերոսը» | |
| Փետրվար | Միջոցառում << Ձեզ բացակա չենք դնում >> նվիրված մեր դպրոցի աշակերտներին, որոնք անմահացան: | |
| | Աշխատանքներ տանել ետ մնացող աշակերտների հետ: | |
| | Անցկացնել պլանավորված զրույցներ դասղեկի ժամերին հետևյալ թեմաներով.<br>1.«Հանդիպում ոստիկանի հետ»<br>2.«Համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրներ»<br>3.«Անաղարտ պահենք մեր մայրենին» | |

| | | |
|---|---|---|
| | 4.«Գիրքը իմ կյանքում» | |
| Մարտ | Դաստիարակչական աշխատանք կատարել դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ: | |
| | Ակտիվորեն մասնակցել դպրոցի հասարակական աշխատանքներին: | |
| | Ապահովել աշակերտ - դպրոց – ծնող սերտ կապը, նպաստել դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ: | |
| | Իրականացնել բարոյաիրավական գիտակցության ձևավորման ուղղությամբ տարվող միջոցառումների համակարգ/ զրույցներ լավագույն մարդկանց մասին, հանդիպումներ, բանավեճեր, կինոդիտումներ ու քննարկումներ /: | |
| | Անցկացնել պլանավորված զրույցներ դասղեկի ժամերին հետևյալ թեմաներով.<br>1.«Կանանց միջազգային տոնը»<br>2.«Գենի դերը իմ անձի ձևավորման մեջ»<br>3.«Որ երկրում կուզեիր ապրել» | |
| Ապրիլ | Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց ծնողների հետ: | |
| | Դասալսումներ կատարել բոլոր առարկաներից: | |
| | Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ աշակերտների վարքի և առաջադիմության մասին: | |
| | Հարցաթերթիկի լրացում. Օգտվելով դասղեկի գրքի էջ 46 : | |
| | Կազմակերպել սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ: | |
| | Անցկացնել պլանավորված զրույցներ դասղեկի ժամերին հետևյալ թեմաներով.<br>1.«Մայրս. մեր հացն է, մայրս, Մեր տան աստվածն է, մայրս…»<br>2.Կարգապահական հարցերի քննարկում<br>3.«Հայոց մեծերը»<br>4.«Ես դատապարտում եմ ցեղասպանությունը և պահանջում եմ ճանաչում» | |
| Մայիս | Հետևել աշակերտների անձնական հիգիենային: | |
| | Անհրաժեշտության դեպքում օգնել և աջակցել դժվարություններ ունեցող աշակերտներին: | |

| | | |
|---|---|---|
| | Կազմակերպել դասարանին հատկացված դպրոցամերձ տարածքի մաքրումը: | |
| | Քննությունների նախապատրաստում և աջակցություն. | |
| | Համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ: | |
| | Անցկացնել պլանավորված զրույցներ դասղեկի ժամերին հետևյալ թեմաներով.<br>1.«Հետադարձ հայացք 12 տարիներին»<br>2.«Մեծ կյանքի նախաշեմին»<br>3.Կազմակերպական հարցեր<br>4.«Վերջին զանգ» | |
| Հունիս | Ամփոփել 2-րդ կիսամյակի արդյունքները: | |
| | Հանձնել դասագրքերը: | |
| | Հրավիրել ծնողական ժողով: | |
| | Հերթապահել պետական ավարտական քննություններին, ապահովել աշակերտների ներկայությունը: | |
| | Կազմակերպել ավարտական վկայականների հանձնման հանդիսավոր արարողություն: | |

Դասղեկի ժամը՝

1-ին կիսամյակ – օրը՝ ուրբաթ 7 դասաժամ

2-րդ կիսամյակ- օրը՝ դասաժամը՝ -րդ